


Բրիտանոնեայ ԱՅԼԱՏԱՆ

ՄԱՅՐ ԱՊՈՒՍ. ԷՏԻՄԱՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱԾԱԹԵՐՈՒ



Վ. Գ. Գ. (1881-1948).
Գարեգին Հովսեփյանի դիմաքանդակը. 1935 թ.

Ս. ԱՄՏՎԱԾԱԾԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՒՆԸ

Պատգամ մերօրյա գավակների

Մարդկության պատմությունը մշտապես եղել է ու կա որպես չարի ու բարու, որպես իմի ու նորի, որպես մարդ արարածի ի սկզբանե բնորոշ երկբութիւնը պայքար: Հազարամյակների հոգեմտավոր փորձ ու փորձառություն, իմաստություն ու խոհեմություն ամբարան մարդը, այնուամենայնիվ, կյանքի իր անհատական ճանապարհին մնում է մեծ-մեծ, ինքն իր մեջ, մշտապես անօգնական եւ ներակա գայրակ-ըությունների: Արգելված պտղի համեմատունից ի վեր մարդը կորցրեց կապը ճշմարիտ Աստծու հետ եւ իր էության գոտարկությունը լցնելու համար հորինեց բազում մեծ ու փոքր աստվածություններ, կուրքեր, մտացածին կերպարներ, որոնք այդպես էլ չկարողացան ցրել խավարը հոգիներից: Մեղքը՝ քաղցր ու նույն-բան դառն, սքրիթի մեջ էր պահում մարդուն: Երկրի վրա աստվածների «շապիկ» հագած «մեծերը», իրենց հոգիները մեղքի դեղին անապատներ դարձրած, դեղին ոսկի էին քանոն մարդկային մոծակալների ու կոտորեալ ծուլուն, ծուլուն զապիկների՝ շքեղ դոյակների անուշաբույր ունայնության մեջ կրտսեյան մատնելով իրենց եւ իրենցով գայրակված մնացյալ բոլոր մարդկային հոգիները: Մարդկությունը, այնուամենայնիվ, առաջ անգամ: Միաստվածության գաղափարը վերստին հնարավորություն տվեց անհատին կապ ստեղծելու իր եւ իր Արարչի միջև: Կամուրջ ընդունելով հնազանդության ոգին եւ Աստծու կողմից իրեն տրված պատվիրանների աներկբա կատարումը, ասել է թե՛ կամավոր, սիրահոծար գիմնորագրվումը Աստծու բանակին: Ձիմնորագրվել են անհատներ եւ իմ մահ կանգնել պաշտպանել, մահվան մեջ կյանք սերնդներ ու դարձավ հավատարմ, գաղափարի սերմնացան: Սուրբ չեն ծնվում, բայց սրբանալու, Սրբությանը սրբությանը ծառայելու, անմեղագործ մկրտվելու շնորհն անձերին է տրված, քանզի իր կարելի կարող են անկարելի կարելի վերածելու երջանկություն ունենալ՝ լինի կին թե տղամարդ:



Երկրի վրա ծնված կանանցից անձաները միայն ինչ, որի անունը անգամ այսօր արտաբերելն իսկ աղոթք է քրիստոնյայի

համար: Մարիամ Աստվածածին: Տիրամայր: Մեր ժողովրդի մոտ ընդունված է եղել նաեւ Ամենամայրը: Մայրն ընդհանրապես որպես ծնող, սնող, որպես առաջին կրթիչ ու դաստիարակիչ, ամենախոր գոգացումըները, արժեքներն ու սրբությունները մեզ առաջինը հաղորդող մարդկության համար կա որպես սրբություն, իսկ Տիրամայր պարագայում այդ սրբությունը բազմապատկվում է, որն է ազ-րացած, խնամքի կարիք ունեցող մայրն աշխարհին եւ մայրն ծերանոցների, անկեղանոցների «մեղ» պատուհաններից: Օգոստոսի 13-ին Հայաստան-Գայց Առաքելական Եկեղեցին, ինչպես դարձել շարունակ, այնպես եւ այսօր, տոնեց Աստվածամոր վերափոխման հիշատակը: Սրբազան ավանդությունն ասում է, թե երբ Տիրամայրը մահամերձ էր ու պատրաստվում էր կենթու իր մահկանացուն, ինչպես ամեն մի մայր, այնպես էլ նա, երկրային կյանքի իր վերջին պահերին անգամ կարող էր ու սիրով սպասում էր իր Որդու տեսությանը արժանանալու երջանկությանը: Միայն պատկերացնել կարելի է, թե ինչ զգացումներ, հույզ ու ապրումներ կարող էր ունենալ տարիների կարողութուն ու սպասումը ինչպե՛ս իր մեջ կրած մայրը: Միայն ու փայլաշատ Որդուն վերստին տեսնելու հույսն ինքը կատարյալ սեր է: Եվ ասիա Որդին չուշացավ իր սերն ու հավատարմությունն ընծայելու մորը: Հրեշտակների հսկա բանակով իջավ երկնային արքայությունից եւ գիրկն առավ սիրատուն մորը: Երեւակայել հարկավոր չէ՝ զգայուն համար Տիրամոր երջանկությունը, երբ հոգին ավանդում էր Որդու ծնեքի մեջ, եւ ի՜նչ երանություն, որ Որդու բնեքի վրա երկինք էր փոխադրվում՝ հաստատվելու համար հավիտենական փառքի լույսի մեջ՝ Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից: Նույնիսկ մարդկային ամոռն տրամաբանությունն այլ տարբերակ հազիվ թե կարողանար մտածել: Մայրը մնում է մայր՝ մարդ-Աստված, թե պարզ ու հասարակ մահանքի անցում: Նա միշտ կա՝ եւ մնում է բարեխոս, կա՝ եւ մնում է որպես սիրու ու մկրտման, որպես գոհաբերության մարմնացում: Որպես հոգու գեմություն, որպես հոգեկերտումի եւս մի ճանապարհ ընդունելով Տիրամոր վերափոխման խոդերը մի պահ ետ դառնալով ու մայրն էր կող-րին միայնակ, ցավի, խաբեղանքի, անգործության մեջ տառապող մեր մայրերին, որոնց շուրթերին, անգամ այդ վիճակներում, հանուն մեր բարօրության աղոթքի ու օրհնանքի խոսքեր են հնչում: Սուրբ Աստվածածնի վերափոխումը խորհուրդ է հասցնելու մեզ մեզ՝ բոլոր մայրերի գավակների:

ՄԱՍԼՈՒ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սր. Աստվածածնի վերափոխման տոն խաղողօրհներ

Կիրակի՝ օգոստոսի 13-ին, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին տոնեց Ս. Աստվածածնի վերափոխման տոնը՝ ի հիշատակ Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի կողմից Սր. Աստվածածնի երկինք փոխադրվելուն:

Սր. Աստվածածնի տոնին Սր. Էջմիածնի Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Տեղի ունեցավ նաեւ խաղողօրհների ավանդական արարողությունը: Սրբազան արարողությունները հանդիսապես եղան Ս. Ս. Ս. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը: Պատարագին էր Ս. Ներսես արք. Պոզապայանը:

Վերափոխման տոնի նախօրին Սր. Էջմիածնում ավանդաբար կատարվում է նաեւ Հողակաթի տոնը՝ իբրեւ Մայր տաճարի նախակատիքի օր, քանի որ Լուսավորչի տեսիլով հաստատված Սր. Էջմիածնի Մայր տաճարը, ըստ պատմական հիշատակումների, նվիրագործվել ու օծվել է Աստվածածնի տոնին ու նվիրվել նրա անվանը:

Հարթ երկրյան Մայր տաճարում կատարվեց նաեւ Հսկայնի արարողություն՝ որպես նախապատրաստություն Վերափոխման մեծ տոնի:

Օգոստոսի 14-ը՝ մեծելոց հիշատակի օր:

Օծվեց Վայքի Սր. Տրդատ նորակառույց եկեղեցին

Օգոստոսի 6-ին Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Ս. Ս. Ս. Գարեգին Բ կաթողիկոսի ձեռամբ օծվեց Վայքի ձորի Վայք բաղանի Սրդատ նորակառույց եկեղեցին:

Եկեղեցու կառուցման ծրագիրը կար դեռես 1990 թվականին: Վայքի բաղանապատարանը տրամադրել էր 1,7 հեկտար տարածք, եւ հոգեխոս Վազգեն Ա կաթողիկոսի օրոք կատարվել էր եկեղեցու հիմնարկների արարողությունը: Սակայն ֆինանսական միջոցների բացակայության պատճառով եկեղեցու կառուցումն ընդհատվել էր:

Միայն 1998 թվականին ԱՄՆ-ի Դեբորթ բաղանում բնակվող մեր հայրենակիցներ տեղ եւ տիկին Գալուստ եւ Էմմա Սողոմոնյանների ֆինանսական աջակցությամբ շնորհիվ վերակառուցվեց եկեղեցու շինարարությունը: Ճարտարապետն է Արմուր Գալիկյանը:

Տեղ եւ տիկին Սողոմոնյանները ոչ միայն հոգացել են շինարարության ողջ ծախսերը, այլեւ եկեղեցու օծման առիթով նվիրել են անհրաժեշտ գույքը՝ թախանայական զգեստներ, եկեղեցական իրեր, արծաթե սկիհ, մյուռոնաբափա աղավաղ, ճաճանջ, բուրվառ, բջոց, որոնք հայկական արվեստի գործեր են:

Այսօր արդեն Արփա գետի աջ հովտում՝ սրբազան սարերի եւ ժայռերի միջից վեր է խոյանում հավատքի մի նոր տուն՝ եկեղեցի մի եկեղեցի, որն առաջինն է կրելու Հայոց արքա Տրդատ Մեծի անունը:

Նշանակվել են նոր տեսուչներ Գեորգյան հոգեւոր ձեռնարանում եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում

Ս. Ս. Ս. Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ՝ Գեորգյան հոգեւոր ձեռնարանում եւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցում նշանակվել են նոր տեսուչներ: Գեորգյան հոգեւոր ձեռնարանում պաշտոնավարելու է Սր. Գեղարդ վանքի նախկին վանահայր Ս. Եղիշե ավագ քահանա Մարգարյանը, իսկ Սեւանի Վազգենյան դպրանոցի տեսուչ է նշանակված Ս. Բագրատ արքեպ. Գալստյանը:

Մայր Աթոռ Սր. Էջմիածնի տեղեկատվության համակարգ

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ՄԵՂԵԴԻՆ

Որտեղից որտեղ, գիշերվա կեսին,
Մարքիս մեզ ընկավ ծանոթ մեղեդին,
Հնչեց ու հնչեց անուշ, քրորմազին՝
Իր հոգեհոսն հույզերով համայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Հնչեց, կրկնվեց, նորոգվեց դարչալ՝
Իրար բերելով ներկա ու անցյալ,
Ես համակ աղերս, հավաք, սեղ դարչա,
Եվ հոգիս երգ էր, ճախարան էր միայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Անպերի նման քվեցին հեռու,
Խոհերս մուսյ, մարդս հուր,
Որ սուրբ էին հոգիս ճնշելու,
Եվ հոգր երգից չքվեցին, սակայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Այդ վսեմ երգից ես դարչա նորոգ,
Եվ արդեն ոչինչ, և արդեն ոչ ոք
Սարսափելի չէր, և դա ե թզ չէր լոկ,
Այլ կենսապարգե երկնային մի շա՛յն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Նա իմ հոգու մեջ ծավալվեց, զնգաց
Մերք որպես բողոք ու մերք որպես լաց,
Դարերի միջով եկավ հորդացած՝
Գեղի պես վարար ու գեղի պես լայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Այդ երգը հնչեց ու հնչեց անվերջ,
Հոգիս լողացավ այդ սուրբ գեղի մեջ,
Հոգիս նորոգվեց գործընթացի իր պերճ,
Եվ քառասունըստ թվաց ընդունայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն:

◆◆◆

Հոգիս մարմնաց: Հոգիս գործացավ:
Եվ լույսը երբ որ բացվեց, նորացավ,
Ես խաբար դ էի, անքն ու անցավ,
Եվ ուրախ էի ես միանգամայն:
«Տեր ողորմեսայի» մեղեդին էր այն...

1700-ամյա ուխտագրանցություն

«Բազում ես խիստ դողդեղուն լալսմ հետ լինելոց են յաշխարհիս, յարդոցմունք թագաւորաց ի վերայ միմեանց, սուրբ եւ սասանորիւնք եւ բազում մեղքորիւնք, որք զգալաւոր դողոյն կրտսեան մշանակեն, որ եկեալ նաոխից ըստ գրեցելոյն ի տեղոյն սրբորեան, ցոյցանելով գինքն Աստուած... գոր Տէր Յիսուս սաստակեաց, հոգով բերանոյ իտոյ...»:

ՄԵՂԵԴԻՆ ՄԵՂԵԴԻՆ ՄԵՂԵԴԻՆ

Հայոց արքի հոգեւոր կյանքն աշխի է ընկնում մի շարք յուրահատկություններով, որոնց ամենաբնութիւն է անդրադարձումը՝ ինչպէս մեր Տէր Հիսուս Քրիստոսի՝ Իր աշակերտներին բազմիցս արված նախազգուշացումը. «Արքուն կացեցե՛ք» (Մատթ., 25, 13, Մարկ., 13, 37): Երբորդ հա-

մակն փորձի վրա՝ օրենսդրական, հասարակական հարաբերությունների, տնտեսական, կրթական եւ այլ բնագավառներում:

Հայ ժողովուրդը իր ստեղծագործական տարածքով դարձրել շարունակ հարստացրել է համամարդկային արժեքների գանձարա-

կունքներից բխող նախնիների վկայություններից եւ իմաստություններից, ունակ է նույնիսկ մեծագույն կորուստներից հետո ամբողջությամբ մեջ պահպանել ազգային գոյաբանության գաղափարական համակարգը: Հավատքով եւ գիտականորեն ճիշտ կարգավորման դեպքում մասերն ամբողջ են կազմում, բանգի յուրաքանչյուր մասը գիտակցվում է որպես ամբողջի կրող՝ թե՛ պատասխանատվությամբ եւ թե՛ երախտագիտությամբ: Ազգային արժեքների սրբորեն պահպանումը ճշմարիտ աստվածաշատության մեջ վկայված էրնո-հոգին սկզբունքների չկտրվելու միակ գրավականն է, բանգի, ինչպես Պոդոս առաքյալն էր ուսուցանում,

հետեւողները, ինչպես նշել է Մարգարիտ Օրմանյանը, ս. Մահակն եւ ս. Մարտիկ մահվանից հետո շատ ակնյի համարձակություն էին մտքորեն եւ «եկեղեցական պաշտօններին» ալ արքանեակներ ունեցած են, եւ երկրին մեջ կարգ ու կանոն, տուն ու ընտանիք, եկեղեցի եւ պաշտամունք տակնուվրայ ընթաց են, այնպես որ բոլոր մեծամեծներ, ժողովուրդը ներդառն ու գոգառն հոգեւոր պաշտօններեան են դիմած ըսելով. գեղեցիկ կարգ սրբոյն Գրիգորի եւ Ներսէսի եւ Մահակայ եւ Մարգարի դար ամբողջ հաստատեցէր. այլեւ զգաւն ես որպէս մեր կամքն են եւ մեր կամքն եւ անորժիւր յանձն առնունք, բանգի կարգ եկեղեցոյ թուլացան եւ մարդիկ յա-

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՆՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ԲԱՐՈՅԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՆՈՆԵՐԻ ԱԶԳԱՊԱՇՏԱՆ ԽԱՐԱՌԻՐԳԵ

գարամայի շենքն մենք պատրաստվում ենք ազգովի նշելու Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը, եւ պատմական իրողությունն այն է, որ ավելի քան հինգ հազարամյա պատմություն ունեցող հայ ժողովրդի կյանքում հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունները ծագումնաբանորեն ազգապահպան նշանակություն են ունեցել: Մովսէս Խորենացին երանի է տվել ճշմարիտ աստվածաշատության հոգով լցված հայկազունների ժամանակներին. «... Ինձ այսօրից արք ի մեքոք թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք եւ ինձ արեան առօր եւ հասարակ հարազատք: Եւ սիրելիք էր ինձ՝ յայնձմ գալ Փրկչին եւ գիտ գնել, եւ առ մարք յաշխարհ գնումն իմ լինել, եւ նոցա տերութեանքն խորխանալ, եւ յարեանց ապրել վտանգիցս» (Մովսէս Խորենացի, «Պատմութիւն Հայոց», ԻԲ):

Հայաստանյայց Առաքելական եկեղեցին դարձել շարունակ Արշակունիների, Բագրատունիների, Ռուբենյանների եւ Չարաբյանների օրոք, հանդիսացել է Հայոց պետության հոգեւոր նկուղի, իսկ դժնդակ ժամանակներում նաեւ Հայոց պետականության ազգապահպան կրողը: Իսկ այսօր Հայ եկեղեցին, փաստորեն, պաշտոնապես հայտնվել է պետությունից անջատ կարգավիճակում, առանց դրոշմունքի հավասարակշռող երաշխիքների: Դա լի է ապագայից սպասվող վտանգով, բանգի հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների որոշ յուրօրենքներով տիրող անգործունե եւ անպատասխանատու մթնոլորտի հետեւանքով բունավոր սնկի նման աճած աղանդավորության մուսուլմանային ծիւղեր «դեմոկրատական ազատականության» կարգախոսի տակ, ի հակադրություն եկեղեցական կանոնադրության, իրենց համար պակասվելով նորաթուխ կարգավիճակով՝ իշխանությունների հովանավորության ներքո կարող են հավասարեցվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն:

Եվրոպական խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցելու իրողությունն այսպիսի մտորումների տեղիք է տալիս, բանգի որ խոսքը համասեւեռության եւ աղանդավորականության պաշտոնապես ճանաչվելու խնդրին է վերաբերում:

Վկան է դեռեալ Հայաստան-Հայրի թագավորության (մ. Ջ. XV-XIII դդ.) ժամանակներից եկող ժողովրդական հավաքը՝ Աշխարհաժողովը, որը հնում եւ միջնադարում ժողովրդավարության արտահայտություններից մեկն էր: Ժողովրդավարության վաղ արտահայտություններից էր Ս. Գրիգոր Լուսավորչի ծանակներից Հայոց կարողիկոսի ընտրությանը հոգեւորականության հետ մեկտեղ ժողովրդի լայն խավերի ներկայացուցիչների մասնակցությունը: Եվ այսօր, անտեսելով Հայոց աշխարհում կուտակված հազարամյակների փորձը, առանց գիտա-ստեղծագործական մշակումների փորձել, արհեստականորեն օրենսդրական դաշտի ստեղծումով, օտար միջավայրին բնորոշ երևույթներ ներմուծել, նշանակում է նորմալ Զորավարի պատմած թե՛ սերմնացանն է թե՛ հին ու նոր տի-

«Իսկ եթե երեխայից սուրբ է, սուրբ է եւ զանգվածը, եւ եթե արժատը սուրբ է, սուրբ են նաեւ ճյուղերը» (Հռոմ., 11, 16):

Այսօր դեռեալ գերության մեջ է աստվածաշնչական Արարատ լեռը՝ մեր ազգի եւ մարդկության փրկության վկայության սուրբ զագաքը: Արարատը Հայոց աշխարհի արքայած փնձն է, որի քրիստոսակոչ իսկանքն է Հայաստանյայց Առաքելական եկեղեցին՝ իր ներկայիս եւ պատմական թնձերով: Հիւրավոր, հավիտենականության կնիք է կրում եւ գոտեպնդում ու հույսով եւ հավատով լցվում Բրիտանիա խաւը: «Այստեղ, աշխարհում նեղություն միայն ունենա, սակայն քաջակրկնեցր, որովհետեւ Ես հայրեցի աշխարհին» (Հովհ., 16, 33):

Հարգանքով Հիսուսին, որպէս հավանի Չորագլուխ (Եբր., 12, 2) ունենալով, Հայաստանյայց Առա-

նորեւորեալ դարձան» (Կան., 112) (Օրմանյան Մ., «Ազգապատմութիւն, 1913, էջ 332): Հայ եկեղեցին միանշանակ կանոնադրել է աղանդավորության հանդէպ իր ունեցած դիրքորոշումը: «Իսկ ո՞նձանք հանդիպին վկան իւրեանց անգեղջ սրտին որ զաշխարհի գիտաւ անվանեալն համարին, աղօթից եւ պահեց անփոքր լինին, ընթանան առ գոյարարս եւ առ պէտեւ աղանդս եւ զիւրեանց ոգին պղծին եւ դատին ի հուր գեղեցին ընդ սատանայի» («Կանոնագիրք Հայոց», Բ, աշխատ. Կ. Զակարյանի, Երեւան, 1971, էջ 172): Միսիսթ Գոշը (1120-1213) նույնպես դատապարտել է ուրացալությունը: «Եթե պատրեալ ի ստանալայն եւ ի նորին արքանեակաց կամ ի թոնութեմ՝ ուրացայ այր, մի՛ բնակեցէ կին նորա ընդ մնա, եւ ի բնակալոյնց, զի մի՛ ի մոլորութիւն նորա անկայ... Չնոյն իրաւունք պատելի է գիտաւորեալ յաղանդս եւ ի երեքունամս» (Միսիսթ Գոշ, «Գիրք դատաստանի», աշխատ. Խ. Թորոյսյանի, Երեւան, 1975, էջ 43):

Հետեւելով Հայ Առաքելական եկեղեցու որդեկան սկզբունքին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը (1955-1994), իր հայապաշտական խոսքն ուղղելով հոգեւոր հայրերին, կոչ արեց կանխագրել աղանդավորների քայքայիչ գործողությունները եւ բոլոր միջոցներով պայքարել նրանց դեմ («Էջմիածին», 1992, Գ-Ե, էջ 30-31):

Ազգային առողջ գոյակից պաշտոնականացված շեղումը լի է անկանխատեսելի վտանգներով, բանգի այն կարող է հանգեցնել ազգային մտածողության խեղաթուրման, հատկապես մեր ազգի ապագայի՝ երիտասարդության միջավայրում: Այնպիսի շեղում, ինչպիսին համասեւեռականությունը կամ համասեւեռականությունն է, որը Աստվածաշնչում եւ միջնադարյան եկեղեցական եւ աշխարհիկ կանոններում որակավորվել է որպէս այլաբանական պղծութիւն, եւ այդ պատճառով դիվանդաններն անվանվել են «արտագէտ» կամ «արտամոլ» ու խառնաբերութիւնը դատապարտել: Այն, խաբարեւել մարդկային հոգին ու բնորոշող ախտահարում է ազգային դիմագիծը: Հին Կալկալիսանում մահապատժել էր սպառնում նման պատմական դիվանդաններին: «Տերը խոսեց Մովսէսի հետ ու ասաց. «Խոսի՛ր Իսրայելի որդիներին հետ ու նրանց ասա...» «Եթե որեւէ տղա-մարդ մի այլ տղամարդու հետ պատելի, ինչպէս կնոջ հետ, նրանք արծաթով գործած կլինեն: Երկուսն էլ մահակն թող դատապարտվեն, որովհետեւ մահապարտ են» (Լեււտ., 20, 13, հմտ. 18, 22):

ԼԵՎՈՆ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր
Հայրանյակի



կերի մասին առակները, բանգի այն սերմերն են պտուղ տալիս, որոնք սերմնացանը ցանում է պարսպառ հողի վրա (Մատթ., 13, 1-9, Մարկ., 4, 1-12, Լուկ., 8, 4-10), ինչպէս նաեւ հին գիւնին պնդել է լցնել հին տիկերի, իսկ նոր գիւնին՝ նոր տիկերի մեջ, հակառակ դեպքում նոր գիւնին հին տիկերը կպատռի կամ կպայքեցնի (Մատթ., 9, 17, Մարկ., 2, 22), Նաոյի «Սուր գիւնին նոր տիկերի մեջ պնդել է լցնել, եւ երկուսն էլ կը պահուեն: Եւ ոչ որ, երբ հինը խմի, նորը կ'ուգեցալ, որովհետեւ կ'ասի, թե՛ հինը աւելի արեւ» (Լուկ., 5, 37-39):

Պարսպառ հողը կարելի է մեկնել նաեւ որպէս ազգային իմաստություն շնորհաբեր, իսկ հին տիկերի մեջ պահվող գիւնին՝ պատմական հիշողությանը կուտակված ավանդույթն արժեքներ: Եղել են անբարենպաստ դարաշրջաններ ազգային արժեքների պահպանման ու բազմապատկման համար: Սաւակայն ազգային մտածողությունը, սնվելով ճշմարիտ հավատքային

բնական եկեղեցին իր աստվածաշնչական դարավոր փորձի ներդրման նոր ասպարէզ է ստանում պատկանելու իր հոռը պաշտոնականացվող աղանդավորականությունը եւ համասեւեռականությունից, բանգի որ եվրոպայից իր կանոնադրությունից բխող այս պատկանելիքն ընդունումը հակասում է մեր ժողովրդի հավատքային եւ ազգային գոյաբանությանը:

Պետք է արձանագրել, որ միջնադարում Հայ Առաքելական եկեղեցին համար ավանդական էր դարձել երկրի համար ծանր ժամանակներում ազգի հոգեւոր պահպանության ուղղված կանոնների մշակումը: Հայաստանի նկատմամբ Մասանյանների նմանական թագաւորականության իրագործման պայմաններում արաւմուկութեան դին ուղղված առաջին միջոցառումն էր Երեւանի Զահակիանի (444 թ.) ժողովի ընդունած քան կանոնները, որոնց մեջ խիստ դատապարտվում է մոլորությունների աղանդը, որի

ԵՐԵՎԱՆԻ ԱՐԲ. ՊՈԶԱՆՏԻՆԱՆ

ՀՈԳՈՒ ԵՎ ՄԱՐԴՈՒՆԻ ԿԱՊԸ

Ալիգոր ճարտար համայնք

Թեպետ քվում է իսրայելացիները ևս իրենց մասին նույն զգրված է օգտագործում, ինչ որ մենք, բայց միշտ չէ, որ մաս խոսում է միեւնոյն բանի մասին: Արարածն պատմության մեջ բավականին իրազեկ ենք դառնում իրենցիկ մարդու ընկալմանը: Մարդը ստեղծվել է այնպես, ինչպես բրուտն անոթն է պարարատուն, բայց մա դեռևս լիարժեք մարդ չի կարող լինել: Բանի դեռ Աստված չունի չի փչել նրանում, եւ չի կարծել կենդանի հոգի: Մարդը չունի հոգի: Աստված չունի հոգին է, քանզի ապրելու միջոց դա է, ասկայն դա կարող է օգտագործվել ամբողջական անձի նշանակությամբ (Բ. Օրենք, Ի, 16, Սաղմոս, 66, 6): Հրեան հասկանում էր, որ սիրտը մարդկային կյանքի աղբյուրն է եւ չի կարող հասկացվել մարդու հետ առանց ամբողջական կապակցության: Հոգին կյանքն է, եւ մարդու կյանքը կախում ունի նրա արյունից: Այսպիսով, արյունը հոգին է (Բ. Օրենք, ԺԲ, 23), եւ խմել ուրիշի արյունը կնշանակի իր ստեղծելու նրա կյանքը: Ոսկորները նույնպես հոգու գաղափարի մաս են կազմում, քանի որ մարդու ուժով կամ թույլ լինելով կախված է ոսկորների ամբողջությունից կամ թուլությունից: Այսպես նաեւ մարմնի բոլոր մասերն են արտացոլում ամհատի կյանքի վիճակը, լյարդը (Ողբ, Բ, 11), աչքերը (Սաղմոս, ԼԿ, 11), քիթը (Հոբ, Գ, 9) եւ, անշուշտ, դեմքը (Առակ, ԺԵ, 13) ու գլուխը (Եզեկ, Թ, 10):

Ըստ իրենական պատկերացումների գոյություն ունի ինչպես մարմնի եւ հոգու՝ որպես մեկ եւրոյան, այնպես էլ

Ո՛վ...

*Տե՛ս, ո՛վ է գալիս
Հանդարտ խալիվով,
Անշուշտ, անշուշտ
Հոգուդ մեջ ինքնու՛մ:*

*Տե՛ս, ո՛վ է գալիս,
Քո վրդով անցնում,
Քո խոսքով ինքնու՛մ
Հոգուդ մեջ ինքնու՛մ:*

*Գալիս, խոսում է
Հոգուդ անկողնին,
Մեր գրքեր կարճացնում
Խոսքերն ինքնու՛մ:*

*Որդու՛ն Հաղորդվես
Նրա խորհրդին
Եվ դառնաւ նրա
Վարդապետութեան
Մեր մեջ մարմնի մեջ:*

Ներսես Վանական

դրանց միջեւ հակադրության գաղափարը: Մակայն սա երբեք չի կիրառվել անհատի վերաբերյալ, այլ հակառակորդ ուժերի, օրինակ եգիպտական ցեղերը «մարմին» են, ուստի եւ թույլ (Եսայի, ԼԿ, 3): Մարմինը ներկայացնում է այն, ինչը տկար է եւ անհաստատ, հոգին՝ այն, ինչը զորեղ է: Հրեաները մարմնի որեւէ մասն արտահայտող բառն օգտագործում են այնտեղ, ուր մենք կօգտագործեինք ամբողջական մարմնի համար: Նրանց ատում են թշնամին սպանվել է «բազմակի ծեռքով», քանզի համարում են, որ հոգին տվյալ պահին ամբողջովին գտնվել է այդ մասում:

Քանի որ հոգին ու մարմնին այդքան սերտորեն մոնացված են, ինչպես մեկ ցնտանիքի անդամներ, որոնք «մեկ մարմին են», ապա գիտակցում են, որ իրենք նաեւ «մեկ հոգի» են: Նրանք կարող են համատեղ գործել եւ ծրագրեր կազմել, որովհետեւ ապրում են ընդհանուր կյանքով:

Հրեական աստվածաբանության մեջ, երբ մարդը մահանում է, նրա հոգին դուրս է քափվում (Եսայի, ԾԳ, 12): Հոգին մնում է, բայց այն անուշ է (Եսայի, ԺԳ, 10), չնայած որ դեռեւս մարմնի մասն է: Այդ պատճառով մահացած մարդու մարմնի մասերը հատելով համարվում է հոգու անհանգստացում: Մարմինը հոգին է համեմատվում թռչուններից եւ գազաններից պաշտպանվելու համար, սակայն հոգին կապված է մարմնին ոչ կյանքի ընթացքում, եւ ոչ էլ մահվանից հետո: Այն կարող է հայտնվել մարմնից դուրս միեւնոյն ժամանակ լինելով նրա մեջ:

Ֆրանսիական պատերազմ է հայտարարել աղանդներին

Ֆրանսիայի Ազգային ասամբլեան օրենքի նախագիծ է ընդունել, որով «գիրտակցության մանկապաշտպան» համար կարող են 5 տարի ազատազրկման ենթարկվել:

Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորները միաձայն ընդունել են օրենքի սենսացիոն նախագիծ, որով համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ ջրեական հանցագործություն է համարվում «գիտակցության մանկապաշտպան»։ Նման հանցագործության հայտնաբերման դեպքում նշյալ օրենքը պատիվ է սահմանել 3-5 տարի ազատազրկման եւ 300-500 հազար ֆրանկ տուգանք, եթե Սենատը այս օրենքն ընդունի այս տեսքով։

Օրենքի այդ նախագիծն ձեւակերպում է տրված, թե ինչ է աղանդը. «խուճ, որն իր գործունեության արդյունքում խոչընդոտում է սոցիալական կյանքի զարգացմանը, ինչպես նաեւ հանրային կյանքի զարգացմանը, որի արդյունքում մարդը կունենա լուրջ կորուստներ»։

Ֆրանսիայի ԼՂ հատուկ ծառայությունները, որոնք զբաղվում են աղանդների, ձեւակերպել են 10 չափափոխներ, որոնցից երեք նույնիսկ մեկն էլ որեւէ կազմակերպության գործունեության մեջ տեղ է գտնում, տվյալ կազմակերպությունն աղանդ է համարվում։ Այդ չափափոխներին են՝ գիտակցության ապակայունացումը, նախկին շրջապատի հետ կապերի խզումը, ֆիզիկական առողջության հանդեպ ոտնձգությունը, հիպոսթազիա եւ ինյուբերը, հասարակական կարգի խախտումը, իշխանական կառույցներում ներառվածությունը փորձերը, իշխանների հավաքագրումը, տնտեսական գործունեության մեջ ճորձերի խախտումը լինիցների գաղտնալսախություններն են այլը։

Աղանդների ղեկավարները լուրջ անհանգստացած են օրենքի այս նախագիծով, նույնիսկ ելույթներ են ունենում, թե այս օրենքի ընդունումը Ֆրանսիայի համար կառուցում է «ժողովրդավարության քաղաք»։ Մեկ ուրիշն էլ նշել է. «Նման օրենք միայն Ֆաշիստական իտալիայում է եղել, որը սկզբում գործադրվել է ընդդեմ կոմունիստների, ապա՝ հոմոսեքսուալիստների»։ Ֆրանսիայի Ազգային ժողովի պատգամավորներից մեկը զուգահեռներ է անցկացրել «սեկսուալ լիբերալիզմի» եւ «սեքսուալիզմի» միջեւ, որոնք ամբողջատրել է բացել դպրոցներից 100 մետրից պակաս հեռավորության վրա։

Այնուամենայնիվ, Ֆրանսիայում շատ լուրջ խնդիր է դարձել աղանդների հարցը։ Փորձագետները ցուցաբերում են կրոնական կազմակերպությունների, աղանդների, որոնք հասարակության համար մեծ վտանգ կարող են առաջացնել։ Կան տասնյակ փոքր նման կազմակերպություններ, որոնք 50-ից ավելի անդամներ ունեն, եւ կան միջին չափերի 500-2000 անդամներով տասնյակ կազմակերպություններ։ 10-ից ավելի աղանդական կազմակերպություններ ունեն 2000-10000 անդամներ, իսկ «Եւրոպական վանքեր» հավատացյալների թիվը միայն Ֆրանսիայում մոտ 130000 է։

Չնայած մասշտաբային առումով Ֆրանսիայի մեծությանը, բայց Ֆրանսիայում էլ այսօր գրեթե նույն վիճակն է, եւ հասարակության այս առումով իսկապես լուրջ վտանգ է սպառնում։ Եվրոպայի ամենամեծ, ժողովրդավարությանը, հասարակության եւ առհասարակ մարդու շահերին ու իրավունքներին մեծ տեղ տվող Ֆրանսիան այսօր պայքարի է դուրս եկել եւ օրենքի նախագիծ է ընդունում՝ ելնելով դրույթներից եւ դրանից բխող ծանր հետևանքներից։ Իսկ Ֆրանսիայում, որը դեռեւս իսկապես չի անդամակցում Եվրոպայի խորհրդին, այլ միայն երաշխավորվել է վերջինիս անդամակցությունը, համաձայնել է փոփոխություններ կատարելու իրավական եւ մարդու իրավունքների ոլորտում։ Նշենք, որ եւս ԽՍՀ իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովը կողմ է եկել աղանդների խորհրդին Ֆրանսիայի անդամակցությանը, պայմանով, որ Ֆրանսիան կատարի քաղաքական հարցերի հանձնաժողովի բանաձեռնի նախագիծն ազատության պարտավորությունները։ Նշենք 1-2 փոփոխության պարտավորություններ, որ Ֆրանսիան, հանուն Եվրոպայի խորհրդին անդամակցության, կկատարի։

Օրինակ, Ֆրանսիայում համաձայնել է օրենք ընդունել, որով կկարգավորվի ոչ ավանդական եկեղեցիների (աղանդների) գործունեությունը։ Բացի այդ, նաեւ Ֆրանսիան պարտավորվել է, որ 3 տարի հետո, որպես պարտավորություն, օրենք կընդունի «Այլընտրանքային ծառայության մասին»։ Եվրոպական Նորոգիչ համապատասխան, «Իսկ մինչ այդ համաձայնում կկատարվի ազատագրված դատապարտված կամ կարգապահական թույլատրված ծառայող այն անձանց նկատմամբ, որոնք հրաժարվել են զինվորական ծառայությունից՝ կրոնական շարժառիթներով, եւ նրանք թույլ կտան զինվորական ծառայությունը փոխարինել բաղադրականական ծառայությամբ»։ Այդպիսով սա չի նշանակում, որ շատերը կանդամակցեն այդ աղանդներին՝ զինծառայությունը քաղաքական ծառայության փոխարինելու նպատակով։

ՄԱՐԿ ԵՍԵՐՈՒՆՅԱՆ
«Արագ»
8.8.2000 թ.

ՀԵՏՄԱՀՈՒ ԿՅՈՒՆԸ ՄԵՄԱԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Հին Կտակարանում մարմնի հարության վերաբերյալ չկա որեւէ վարդապետություն։ Դրան մեծ տեղ է հատկացվում նոր Կտակարանում, ասկայն էն՝ մահվանի ծառայարարին մեր Տիրոջ ասած խոսքերը (Դուկաս, ԻԳ, 13 եւ այլն) ցույց են տալիս, որ մեզնեւ ճշմարտության հանդեպ հավատի ուղին նախապատրաստված էր. «Ով ամբոտ է թուլափորտ մարդիկ, որ դժկարամուն են հավատալ այն ամենին, որ ասացին մարգարեները։ 2Է՝ որ Բրիստոսը պետք է նույն այդ չարաբանները կերել եւ այնպես մտնել իր փառքի մեջ» (ԻԳ, 25-26)։

Բահաղ աստծու պաշտամունքի մեծությունը մարգարեները մերժել էին այն հարության գաղափարը, որը հիմնված էր ընդունության վերածննդի տարեկան փաստի վրա։ Հոգու անմահության երկնամարտական գաղափարը համարյա չի քննարկվում Հին Կտակարանում։ Աստծու որպես արարչի եւ որպես երկրի տիրոջ նկատմամբ Իսրայելի ունեցած հաստատուն հավատքի պատճառով։ Աստված արարեց ողջ աշխարհը, եւ դա բարի էր. մարդու մարմինը այդ աշխարհի մի մասն էր։ Ենթադրել, որ երանությունը սկսվում է մարմնի մահանալուց հետո դրախտում, նշանակում էր Աստծու՝ որպես արարչի բարության մերժում։

Այդ իսկ պատճառով Հին Կտակարանում ամենատարածված գաղափարը հետմահու կյանքի մասին մարմնից անցած գոյությունն ունեցող հոգու կես կյանքն է։ Դա մի տեղ է, որտեղից վերադարձվել է։ «Եթե ինչի մարդ գերեզման, չի ելնի այնտե» (Հոբ, Է, 9)։ Բայց կան խոսքեր այն մասին,

սին, որ Աստված կարող է դուրս բերել մարդուն գերեզմանից։ Նա առողջացնում է մահանքով հիվանդներ, եւ նույնիսկ հանդերձյալ կյանքում Աստված նրա կողքին է (Սաղմոս, ԵԼԹ, 8), եւ հետեաքար աստեմական եւ ամենական ամեն ինչ նրա իշխանության տակ է։

Հարության փաստի նկատմամբ Իսրայելի հավատի աստիճանական աճն արդյունք էր Աստծու կողմից ընտրյալ ժողովրդի վստահության եւ իր ընտրյալ

ամհատների՝ փրկության հանդեպ տեսականորեն ունեցած հավատի։ Արարածը եւ Սառան գառմալ տարիքում երեխա ունեցան. Արարածի որդի Իսահակ փրկվեց զոհ մատուցվելիս՝ վերջին պահին։ Հակոբը, գողանալով իր եղբոր առաջնեկության իրավունքը, տնից-տնից արտաքսվեց, սակայն հետագայում վերադարձավ ավելի հարստացած։ Նրա պիղծի որդին Հովսեփը, եղբայրների ծեղծել թիչ էր մնում սպանվել, բայց վաճառվեց սուրբությանը՝ հետագայում դառնալով միջոց սովից եգիպտացիներին եւ իր սեփական ընտանիքը փրկելու։ Այս եւ բոլոր մյուս նման պատմությունները խոսում են մահից դուրս առկա կյանքի մասին։

Ոմանք տեսնում են հարության հնարավորությունը, քանի որ, եթե Աստված արարել է, ապա նրանք, ովքեր այս կյանքում հավատարմորեն ծառայել են Նրան, հատուցում կստանան։ Հին Կտակարանում որեւէ տեղ չի ասվում բոլորի հարության գաղափարի մասին, բայց նույնիսկ այն հատվածները, որոնք Իսրայելի համար նախագուշակում են հարություն մեռելներից (Եսայի, ԻԼ, 19), չեն բացառում նույնը մյուսների համար եւս։ Դանիելի գրքում (ԺԲ, 2) պարզորոշ ասված է, որ պետք է հավատարապես վերակենդանանան միաժամանակ եւ բարին, եւ չարը։ Այսպիսով, Հին Կտակարանում հարության այս ուսմունքի զարգացման հիմքը կա, որովհետեւ մեր Տիրոջ ժամանակաշրջանում փարիսեցիների եւ սեդուկեցիների աղանդների միջեւ եղած գլխավոր տարածամյություններից մեկը, որ տեսնում ենք, այն էր, որ վերջիններս չէին հավատում հետմահու հարությանը (Մատթ., ԻԲ, 23)։



Որոշումներ:

Ամբողջ հոգով, ամբողջ սրտով, ամբողջ գործընթացում սիրելով, ամբողջությամբ հիմնված, ամբողջ, այսինքն՝ իրական դարձնելը, իրագործելը մեր հավատով, որը կենդանանում է գործելով, հաստատվում է և ամրապնդվում ձեռքբերումներով: Այսպիսիները «հավատով» պարտության մատնեցին բազմաթիվություններ, գործեցին արդարություն, հասան խոստմանը, փակեցին առյուծները, բերաններ, հանգցրին կրակի գործընթաց, փրկվեցին սրի բերանից, գործացան տարություններից հետո, կտրիճներ եղան պատերազմի մեջ...» (հմտությամբ, ժԼ, 33-38): Սրանք ամենաբարեգործներն էին՝ հաստատված հավատի մեջ, «որոնք այս աշխարհի արժանի չէին»:

Այսօր, այսօր, իվար է մեզ գանից յուրաքանչյուրի համար սակայն բարձրացնել մեր մեղքը ինքնուրույն ձեռքերը: Դժվարությունների մեջ են ճանաչվում ճշմարտությունը, անկեղծությունը ու հավատարմությունը:

Արդյո՞ք հեշտ է Արթուրին համար իր միակ որդուն: Իսկ հակին, հարգաբերելով: Արդյո՞ք հեշտ է Հովսեփի համար սիրելի եղբայրների կողմից դավաճանությունը օտարների փրկաճառով: Արդյո՞ք հեշտ է Մուսեսի համար 40 տարի իր դավաճանության անապատով առաջ մորդելը: Եվ ի վերջո՞ մի՞շտ հեշտ է Հիսուսի համար՝ մեծ ճանաչելով՝ մեզ այցելելը, մեծ նավահան այն դեպքում, երբ մեծ խաչված գիտեր իր դաժան և անմարդկային վախճանի մասին: Սակայն «Երանի բոլոր քրիստոս, ովքեր հույսը որդե ի Տիրոջ վրա» (Մաղմ., Բ, 13) քանի որ բոլորին ավելիով տալիս է պիտի տրվի:

Հաստատվելով մեր հավատի մեջ, է և ապրելով կրթության կյանքը կոհանա հասկանալի կանգնել: Արիություն ու վեհանություն կկերտաբանվեն մեզ ստեղծում, է մեծագույն շատեր կհասկանան, քե ինչ է երջանկությունը: Աստծո խոսքը լսել փառուն խորհրդատու միայն այնտեղ մենք կարող ենք գտնել այն, ինչն այնքան է կար փնտրում ենք, քանի որ «ինչպես մարդն է խրատում որդուն, այնպես էլ քո Տեր Աստվածը պիտի խրատի քեզ» (Օրենք, Բ, 5):

Թոքափել մեր կասկածաշունչը, «արձանացնել բոլոր մեծ ձեռքերն է կրտսածանները, քայլերն ուղիղ արահեներով, որպեսզի ով կալ է, լորվի, այլ մանավանդ՝ բժշկվի» (հմտ. երբ., ԺԼ, 13):

Հայկ սրկ. Պրոշյան

ZU4USUPUNT63N7E

քից, ի ինչէ՛ր ասես, որ չենք անում, բացի Տիրոջը վստահելուց և հուսալուց:

«Ի՞նչ է հավատը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը և ապացույցի այն բան՝ իր, որոնք չեն երևում» (Եբր., ԺԿ, 1): Իսկ որքանո՞վ ենք մենք վստահում չեղեցողութեան, և և որքանո՞վ է անասանք մեր հավատը գալիք խոստումների նկատմամբ: Ապագայի հուսանհանդերձ՝ ինչպե՞ս ենք մենք ապկում մեր ներկան: Կատարում ենք մի բանի պատկերանքներ, մանկացունք որոշ արարողությունների և ապա սպասում: Գործելով՝ ապրքան առաքինությունների մի՞թե չենք մտածում անհետմեզգելի, արագահաս պարզեմների մասին. մի՞թե անհասալի վարձատրություն չենք պահանջում մեր չնչին աշխատանքի դիմաց:

Մենք սպենք Ամենա

ենք բոլոր մրանց նկատմամբ, որոնցով Աստված շրջապատվել է մեզ: Եվ այդ ժամանակ է, որ անմնացորդ է անդալաճման աստվածային սերը նույն չափով կսկսի գործել թ' մեր եր' մեր մերձակալորների նկատմամբ, որովհետև գրված է. «Եվ ճուխացրեց Տերը Հորին, և երբ սա աղոթեց իր բարեկամների համար, Տերը թողություն չընդունեց մեղերեին: Տերը կոկնակի ավելի շատ տվեց, քան այն հարստությունը, որ առաջ Հորին ուներ» (Հով, ԲԻ, 10): Այսպես, ուրեմն, ով ցանկանում է իր սրտի ուզածը ստանալ, հախ թող իր սրտի ցանկալին տա ուրիշին՝ «առանց չարության, նեմ-գության, կեղծավորության, հախանձի և չարխտության» (Աղեւտ, Բ, 1):

Աղոթքի միջոցով մեր հավատն արտահայտելով՝ Աստվծուն չղարճենք մեր ցանկությունների իրագործման միջո-

նացնել մեր առօրյա գործերով
 և մեր քաղաքացական վերաբեր-
 մունքով։

Եթե մենք մեր (հնարավորու-
 ւթյունների ու ընդունակություն-
 ների չափով) ամուր կառույն
 ենք պատկերասրահներից, սակայն
 դժվարություններ հաղթում են
 մեզ, նշանակում է, որ մենք
 չլսեցինք է «Երեսպալորները այս-
 աշխարհի կերպարանքով, այս-
 նորոգվենք մեր մտքի նորոգու-
 րյամբ, որպեսզի քննենք լավը,
 թե ինչ է Աստծու կամքը՝ քարին
 հանդիմանել և կատարյալը» (հմտ
 Հռոմ., ԺԲ, 2)։

Բնականաբար՝ հավատը
 հավատարմությունն ու վստա-
 հությունը անքաճանցի են սի-
 րուց և գոյություն չունեն ա-
 ռանց նրա։ Միայն մեկ սեր կա
 սեր՝ հավիտենական Գործողն
 Աստծո նկատմամբ, երբ
 մյուս սերերն աճանցվում են
 այս գլխավորից, ինչպես նաեւ
 սեղող՝ չորսիններ Ենթոքող

վեց եւ պիտի տրվի:
Հաստատվե՛նք հավատով
մեք, եւ աստիճան կբերեալանա
կյանքը կդառնա հասակնայի
ազգին: Արիւթոյունն ու վեհանմ
նորոյունը կվերաբարկվան մե
ստեղծում, եւ մեզանից շատեր
կհասկանան, թե ինչ է երջան
կուրթունը: Լստծո խօսքը լա
վազույց խորհրդատուն է
միայն այնտեղ մենք կարող են
գտնուել այն, ինչն այնքան եր
կար փնտրում ենք, քանի որ
«ինչպե՛ս մարդն է խրատում ի
որդուն, այնպես էլ քո Տեր Աստ
վածը պիտի խրատի քեզ» (Ս
Օբեքն, Ը, 5):
Թոքսփե՛նք կասկածա
տուրթունը, «ամբայցմեք թուլ
ցած ձեռքերը եւ կրտած ծնն
մերը, քայլենք ուղիղ արահե
նեռով, որպէսզի ով կար է, չ
լորվի, այլ մանավանդը թշկվի
(հմմտ. Երբ., ԺԱ, 13):

Հայկ արկ. Պրոշյան

ՀԱՅ Ե ԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱՐԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՄԿԻՂՔՔ՝ ԵՄ 4

ՀԱՂՈՐՀՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Պատարագի արարողության ընթացքում Հայկորդուստյան է. երբ Հիսուս Քրիստոսը Ամեն Գաղղի պես հաշտության գոհ, Բարեպաշտի կերպով պատարագվում է ս. Սեղանի վրա բաշխելով հավատացյալներին իր սուրբ Մարմինը ու սուրբ Այրունը՝ ի բավականության ի բողոքություն մեղա: Այլ կերպ ասած՝ ս. Սեղանի վրա մատուցվող Պատարագը հոգեղեն ծաւ է, որին հրավիրվում են մասնագետն ու ընդ ընդհանուրները:


Հաղորդվելով մեղավոր ու փրկության կարոտ մարդ ա-
րարածը հաղորդակցության մեջ է մտնում ուր Արարիչ, Ջավ-
չարարի եւ Փրկչի հետ: Այս խորհրդով կենսակա կապ է
ստեղծվում քրիստոնյայի եւ Քրիստոսի միջեւ: Հաղորդվող-
ները, ճաշակելով Տիրոջ Մարմինը ու Արդյուն, խորհրդա-
բար միանում են ոչ միայն Աստծուն, այլեւ իրար՝ այդպիսի
կապնելով Քրիստոսի Մարմինը եկեղեցին: Այդ պատճառով
է առանց այս խորհրդի եկեղեցին չի կարող ապրել, քրիս-
տոնյան չի կարող դառնալ երկնքի Որջանության ժառան-
գորդ, չի կարող հավիտենական կյանք ունենալ (Հովհ., 2,
54-57): Հետ կարելու է Հաղորդությանը մոտենալ երկու-

դրվել են հավատարմ, այսպես խորհուրդը կկատարվի ի դատապարտությունը իսկ ընդունողին (Ա Կորնթ., ԺԱ, 27-29):

Հաղորդության այլուհ ցորենի անթրոպոմորֆիզմի հացն է եւ խաղողի անապական գինին: Հացն ու գինին խորհրդավոր կերպով Հրիստոսի ճշմարիտ Սարմենի ու Ալյան են փոխակերպվում եւ Պատարագի ընթացքում Սրբագործման պահին: Նրանք արտաքին հատկանիշները մնում են նույնը, իսկ ներքին եւությունը փոխակերպվում է Հրիստոսի Սարմենի ու Ալյան:

ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շարունակելի

ԵՄԵՆԻՆԻ



Չայ կերպարվեստի գեղարվեստական մտածողության մեջ իր ուրույն տեղը ունի նկարիչ Արտաշես Դուրանյանը:

Ընտրված նյութի, թեմայի խոր իմացությունն ու զգացողությունը, դասական ու արդիական ձևաձևափոխությունն ունի համադրումները գրաֆիկական թերթի մակերեսին շնչավորելով՝ նա կարողացավ ստեղծել ամսվոր, երկրամյային մեջ վերերկրայինը ընդգծող մի աշխարհ, ուր լույսը, լուսաստվերի այբբանման խաղերը ոչ միայն ի հայտ են գալիս որպես խորք ու խորություն, հարթություն ու ծավալ, պլանների հերթադարձություն ու հեռանկար կառուցելու կերպարվածական առաջնային միջոց, այլ միտված են վեհաշուք ու հանդիսավոր արարման, մեծ երկունքի խորհրդի գեղարվեստական բացահայտմանը: Նրա հորինվածքներն ունեն աշխարհընկալման այն որակը, ուր տիեզերական ոգու ամասնամասնությունն ու հավերժությունը փաստում են անցավորի, փոփոխականի անփոփոխությունը՝ տարածական ու ժամանակային անվերջության մեջ:

Քրիստոս Աստծո խոսքին ու գործին հետամուտ նկարչի համար քրիստոնեությունն ու ծշմարտ քրիստոնյայի կեցվածքն իր մարմնավոր ու հոգեվոր կյանքն ապրելու կերպ էր, ստեղծագործական ներշնչանք ու սեր: Պատահական չէր, որ նրա «Չայկական բնապատկերներ», «Միջնադար», «Չայաստան», «Չայական ճարտարապետություն», «Չայոց պատարագ», «Տիեզերք» հաստոցային թերթերը, Դանթեի «Աստվածային կատակերգություն», Եղիշեի «Վասն Վարդանա եւ Չայոց պատերազմին», Նարեկացու «Աստված ողբերգության», Շանթի «Չին աստվածները» գրքերի նկարազարդումները խորհրդահայ կերպարվեստում առաջին էին, որ հիմնականում միտվեցին արտաքին ձևերից վեր հանելու նկեղծի, խաչքար, կրոնական նյութ հասկացության ներքին ու իրական խորհուրդը, անաստվածությունից աստվածայինին ձգտել-հասնելու արվեստագետի, մարդու ընկալման ձգտումը:

Կերպարվեստում իր կայուն ձեռագիրն ու ասելիքն ունեցող հանրաճանաչ նկարիչն ու նույնքան ինդուս մանկավարժ Արտաշես Դուրանյանը, սակայն, բնորոշ էր ծանր իր գրական փորձերով:

1994 թվականին ընթերցողի սեղանին դրվեց (ցավով՝ ոչ հայաստանաբնակների) Արտաշես Դուրանյանի «Պահպանակ» խորագիրը կրող ժողովածուն՝ հրատարակված Ամբիփաստում: Առաջարկի հեղինակը՝ երջանակահիշատակ Գարեգին Ա Ամենայն Չայոց կաթողիկոսը, որին թերեւս առաջինն էր բախտ վիճակվել ամբողջությամբ կարդալու նկարիչ-բանաստեղծի գրքի ձեռագիրը, գրում է. «...Առկրկանաբուն ընթերցում «Յարաբարան» մը չէ իմ այս անձնադրոշմ վկայութիւնը: Ոչ գիրքը մերկայացնելու եւ ոչ այլ զայն մեկնաբանելու նպատակը ունիմ: Ի մերու, «Յարաբարան» մը չի կրնար ունենալ ոչ նկարագիրը, ոչ ալ տարողութիւնը գրախօսականի մը: Սա քանի մը տողեր թուրքին կը յանձնեն որպէս անձնական տպաւորութեան մը մէջ շատ ընդհանուր ընդդրոշմ զայն բաժնելու համար ընթերցողին հետ, ընթերցումի սեղանին նստելէ առջեւ...»

...Իր մէջ ինքնատեսութեան խորհապայեց փնտռողը կալ, «Խոստովանանք» բառի տիրականութեամբ յատկանշուած: Եւ այդ որոնումին մէջ աշխարհի բազմաանոյ չարիքներուն եւ մարդաբան չարաշահումներուն սեւեռելու դատապարտութեան կողքին՝ կալ մարդու բիւրեղութեան ամխորտակելիութեան հաւատը, այնքան բարախուռ: Չարն հարուածուած, տառապանքէն այնքան դառնորէն այցելուած այս մարդուն մէջ դառնութիւնը արմատ չէ նետուած: Արանցիլիօրէն վարակիչ լաւատեսութիւն մը, անհուճօրէն տիրապետող բարութիւն մը, անմկարագրելիօրէն գրաւիչ ա-նիշխաւորութիւն մը, մարդկանօրէն անբացատրելի եւ ներանձնա-ցեալ ուրախութիւն մը իր հոգեկան խառնուածքին բաղկացուցիչ եւ տիրական տարրերուն մը կազմակերպում...»:


Դիրաւի, «Պահպանակ» կյանքի դառնութիւններով, վարկիւ-բումներով, գիտակցված ու չգիտակցված մտքերի ծածուկներով անցած մարդ արարածի կյանքն ու մահվան բարդ ու հակասական խորհրդաբանությունն է, ուր հոգեկան փորձում է համընդհանուրի «պտի» ցավի կողմը լինել իր «հաց ու զինուց» աշխարհին բաժին հանելով:

Աստուծոյ ՍՏԱՐԲՈՒՅՅԱՆ

...Լորի, ո՞վ անցեալ, եւ էլ մի խոսիր Կիսաբաղց մարդկանց հառաչանքների. Ցավերի մասին՝ որպես բարեբար. Ո՛չ էլ ապագա ցնորքներ հյուսիր Հյուսիսում ամբողջին խաբելու համար, Ո՛չ էլ բառերից հանգալորելով Նկարագրի սուրբ գործն հացի բուրմունքն ու համը, Ճառի փոխարեն լուռ ու երկուդած Հացի նշխարը բաժանիր բոլոր ունկնդիրներին. Եվ նրանք իսկույն քեզ կհասկանան:

Հավատա՛ միայն մարդկանց գործերին բարեկամություն, Եվ ոչ թե նրանց ճառերին ճակատ, գրքերին շքեղ Եվ օրենքներին՝ ծուլված բռնության ահեղ երկաթին:

Մի՛ խոսիր երբեք «գերագործների» ահեղ անունից Եվ գորշ երկաթը լույսի շղարշով էլ մի՛ գարդարիր՝ Իրեն ուղեցույց, փրկության փարոս, Եվ այնպես արա, որ էլ չմրցես, Ո՛չ էլ մարտնչես հանուն նյութեղեն հաղթանակների....



...Յնձացե՛ք, մարդիկ, մոտ է գարունը տիեզերական, Զմեայի ճերմակ երանությունից դաշտն է կանաչել, Եվ ուխտագնաց լույս մեղուների ցնծուն երգերից Արեւահայաց լեռների վրա

Զմեայի ճերմակն են հնայել նրանց երկնային սիրտը: Յնձացե՛ք, մարդիկ, որ մենք տեսնում ենք Արեգակն արդար, Դանաշում վերին Անճանաչելի որպես արարում Եվ գործում, գործում մեր հոգու լուսե այգետաճանքում Սեղանոցների հարեւանությամբ:

Յնձացե՛ք, մարդիկ, մոտ է գարունը տիեզերական, Եվ ամենուրեք անցողիկ գոյը հոգու հետ մեկտեղ Կարծե՛ք են հավերժ գարնան գոյությունն ու պտղաբերում, Փոփոխական դարձել է նորից անփոփոխելի, Որժաբարեր խավար կիրճերում՝ մշտապես կանթեղ, Փորոքիկները դարձել են արքայի մեղմաշունչ գեպյուռ, Անարգենն անգեւո՛ք բարեգործ, բարի եւ արարչաձիտ, Եվ արարչաձիտը լույսը բանական դարձել տիրակալ: Տիեզերական երանության մեջ ցնձացե՛ք սիրով, Հոգու եւ նյութի ներդաշնակությամբ ռոջագուրվեցեք, Ինքնաճանաչման ջերմ աղոթքներով օրհներ միմյանց Եվ հավերժաբուխ հույս ու հավատով գործեք կյանքի ճանուն հաշտության եւ հանուն սիրո համամարդկային:

...Մի՛րի՛ր հայրենիք, Մի՛րի՛ր հայրենի երկիրը խաղաղ Եվ արեւալամբն հոս արքայած լեռնակույտերը՝ Տոչորված հոգու վերքերի մման. Մի՛րի՛ր հայրենի միտքն ու բարբառը, Բազմատանջ ազգիկ լույս երազները հավերժ անկատար, Զինականների բախճուտ երգերը, Զինարարների տխուր աչքերը, Ուխտավորների ոտնահետքերը՝ Լեզուն արեւով եւ երանությամբ, Կապույտ լեռների հավերժությունը ծիածնազարդ, Իրոնց բազմանիստ սուրբ գազաբներին Բազմել են վերին մեր տաճարները աստվածաբնակ....

...Մի՛ վեր Նա, ի՞նչ էր անունը Նրա, - քչերն իմացան, Որի բազմագուր եւ մշտաճորդ երկնային սիրուց Տոչաշաղ ճամփան ձգվեց, երկարեց Արեւի կողմը, Արեգակն արդար անշուշտ անցավ լեռան կատարով, Կենաց ծառերի բոլոր ճյուղերին Բներ շինեցին ծիծեռնակները, Բարեբեր արտի կանաչ եզերքով Մեղմորեն անցան հեզ մրջյունները, Գայլերը, փայրված իրենց ձագերին, Հանգիստ քնեցին ծաղկավետ ձորում, Մատաղահացի բուրմունքն ու համը Ծիաց, ծավալեց ուխտավորների շուրթերի վրա, Գարնամամուտի լույսից արբեցած բոլոր արջերը Նայեցին լեռան ճերմակ ձյուններին, Ծախրեցին երկինք գմրվաւտ ձիերի երանակները, Լույսը անճանաչեց քափանցեց, անցավ բոլոր կիրճերը, Լայնալանջ այրեր այգին ջրեցին երկնային սիրով, Երկնաճեն մավր իջան լեռներից դաշտերի վրա, Լուսազարն հարսներ հայր-աստվածների ոտքը վազին, Հյուրերի առջեւ լուռ խոնարհվեցին դուր բացողները, Կարկտահարված ցողուններն ամեն Անցացան իրենց արմատի վրա, Մարահարբերում պտղով ծանրացան ծիրանիները, Ծարակները մեղմ դողանջեցին Երգասանքների շուրթերի վրա, Աստծո անվան խորհրդանիշը Դրվեց լիալույս գոհասեղանին, Զվարթ կանչերով արաղողները Ծախրեցին երկինք՝ լույսին ընդառաջ, Արեւ ու ամճրե գրկախառնված իջան երկնքից, Մեծագոր վանքը հազավ լուսեղեն, ճերմակ վերաբլույն, Եվ բարեբար երգեց մեղմորեն Տիեզերական մերդաշնակության Անասնամաճափալ լարերի վրա, Երբ Նա ժամանեց երկիրն այս ջրմալ....




...Բայց, ալա՛դ, ալա՛դ, որ եկել ու հանգիստ Խոսում են այսպես, թեւ ծշմարիտ, Բայց եւ մոլորված ու բռնադատված Ապրում են մեմակ անհայտ զինվորի չիրմաբարի տակ՝ Խորանանկելով, որ իբր մուկ են, Ոչ թե բանական, մարդկային էակ: Եվ բնի խորքում կիսամեռ ընկած՝ դողում են այնքան, Մինչեւ հեռանում, անհայտանում են Պաշտոնավարող տերերն աշխարհի, Եվ ես սթափվում ու շունչ են քաշում՝ Հուշարձանակերտ քարերին ձուլված՝ որպես ուրվական:

Փրկի՛ր, Տե՛ր Աստված, փրկի՛ր ամենքիս սեւ կործանումից, Հանդարտեցրու մարդկային ցեղի լարված ջղերը Եվ այնպես արա, որ շուտ սթափվեմ Տիեզերադավ անաստվածները: Հավիտյան: Ամեն:

Զերի բաժնատիր, հետաքրքրված քրդակցություններից
ընտրել ենք քրիստոնեական թեմայով մյուսեղի ունեցողներին եկելու
մայրամուլ: Մամյա ողջունելու, խլատուելու: մանուկների, պատանիների
համար ստեղծելով բերելու մամյա խախաղեցնությունը, ապա՝ մեր այդ
տարիքի ընթերցողներին տեղեկացնելու լրենք աշխարհի
հարստացմանը մի ուրիշ «մոդրակի»
գլուխյան մասին են:

Quintusque simulque quatuordecimque pueri


Բանաստեղծությունն աղոթք է...



Արեւադարձիկներն առ հասարակ
դարձանք և բարձրացան
երկնից օրհնալ Մարութ Մզը:
Գարբորակ սեփե սուրբ
հաշարանքների ճիշդալ յս
աղեր. որոնց խմբարկարան
թղիւմաթառ յուրանարակ
երկարանքն են եւ
յուրերշուքն են եկեղեցւոյ
շարհաւալ յուրանք:
Մզերն հասարակ ցարծաճան են
հաշարանք
արարաւորանքների ծառանք
թերեւ օրհնաթառ եւ շարհ
փառանքն ճիշդ:
Էջիւսմի թաղարանանք
դանքն են ա. Գրեթե
Լուսարդի եւ աշ
հաշարանքների աղերն եւ
սուրբ ծառանքներ:





Երկնային
գանգակներ



Աղապահ

Դիպչուն կարգով և հեղինակաբար, Դիպչունի Նյարդաբանական լաբորատորիայի Վառլեն Ենգել աշխատեց հերոսաբերականորեն կարգավորել իրեն: Մերա տարածված ախտաբանական վնասված Վառլեն Ենգելը ապրանքներով և աշխատեց ցինկով:

Դիպչունը ախտաբանական վնասված անհատներով և աշխատեց լաբորատորիայում, որտեղ և Վառլեն Ենգելը աշխատեց: Վառլենը սպասեց և ինքնակամորեն ցինկով ախտից, բուժվեց և վերականգնվեց, որի արդյունքում Ենգելը շարունակեց և:




Ընուն Հրաուն Զորհատոսի դավաճանքի առաջին հետևորդները ենթարկվում էին հեթանոսական պետությունների հավաճանքին ու մահվանը դատառն անգին: Դրա համար էլ միջուկայն հետ հաղորդ-դավաճելիս ձուկ էին մկարում, որ զանազան կերպերով, թե իրենք քրիստոնյա են եւ ձկնա պես համր պիտի լինեն՝ հեթանոսների շրջանում: Գաղտնյի պահելու մոր հավատը: Այս մկարում ձուկը համր է եւ չի խոսի այն-բան ժամանակ, մինչեւ գտնեն խաչ-բառի ձգողիս աստաթախանքները:

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1. Ակվարիումային բույս:

2. Գեղաստի ձուկ: 3. Չկաների խումբ: 4

Ձկան մարմնի մաս: 5. Հայաստանում տարածված ձկնատեսակ: 6. Ավարիտումային ձուկ: 7. Գ. Սևուրդիկյանի ստեղծագործությունների հերոսներից, ձկնոտ: 9. Այնքանաձեռն ձուկը: 10. Էկզոտիկ ձուկ: 11. Հայ մեծ



ծովանկարիչ: 18. Կաթնատուն ձուկ: 19. «Ծերունին ու ծովը» ֆիլմի գլխավոր
դերակատարը: 20. Հայ ծովանկարիչ:

ՈՒԳՂԱՀԱՅԱՅ

8. Չկան մարմնի այն մասեր, որի միջոցով կարգավորվում է արագությունը: 12. Լիճ, որը հարուստ է տառեխն ձկնատեսակով: 13. Չկնառատ լիճ Հայաստանում: 14. Չկան կեր: 15. Չկնառատ: 16. Չկնորական գործիք: 17. Հայտնի եւ եզակի ձկնատեսակ Հայաստանում:

Խաչբառը կազմեց ԽԱԺԱԿ ՄԿՐՏՅԱՆԸ
196 դպրոց, 5-րդ դաս.

[illegible]



ՍԱՐԿՈՂՈՎԵ ԼԵՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ


Երեւանից Ջերմուկ մեկնող ուղևորի համար Վայոց անցնելուց հետո, դեպի հյուսիս բացվում է մի նեղ ձորահովիտ, որի միջով հոսում է Արփա գետի աջափնյա վտակ Երեքոնց կամ Գերեթը: Զորահովտի ստորին մասում բխում են հորդառատ աղբյուրներ, որոնք հնում հայտնի էին Աղբերք անունով, իսկ եկամուտ մահմեդական բնակիչները ուշ դարերում կոչում էին Բուլախար, որը սոսկ հայերեն անվանման բառացի թարգմանությունն էր:

Եթե ուղևորը փորձի շարժվել ձորահովտով դեպի հյուսիս, ապա աստիճանաբար լայնացող հովտի արևմտյան մասում ոչ շատ հեռու ներկա Գերեթի երկ Կարմրաշեն գյուղերից, կնկատի մի լեռնագագաթ, որը պսակված է մի գեղեցիկ ձագարով: Լեռը հնում կոչվել է Սարկողովը, այսինքն կողովանման սար, շորիկով հենց այդ ձագարի, որը հրաբխային գործունեության արդյունք է: Բազմերանգ ու գույնզգույն ծաղիկներով եւ դալարազվարճ բուսականությամբ ծածկված լեռը, որ այսօր ընդամենը համգած հրաբուխ է, հավանաբար 735 թ. երկրաշարժի ժամանակ ժայթքել է եւ կործանել Սոգն թաղաքը՝ ծածկելով այն հրաբխային արտանետումներով: Եթե հավատանք Ստեփանոս Օրբելյանի հաղորդմանը, ապա գոհեցի թիվը հասնում էր տասը հազարի: Պատմիչի խոսքերով՝ խալարը պատեց ամբողջ գավառը 40 օր, որը հրաբխի անմիջական հետևանքներից մեկն է եղել:

Լեռը բարձրացած զբոսաշրջիկի առջև բացվում է մի սիգալետ եւ ծաղկավետ հարթություն, որից կարելի է իջնել բոլորածնե ձագարի ստորոտը, որի մեջ մինչեւ այսօր պահպանվել են մի փոքր, կոփածո քարերից կառուցված եկեղեցու ավերակները: Փոքր են եկեղեցու չափերը, այն ունի ընդամենը վեց քայլ երկարություն եւ երեք քայլ լայնություն: Եկեղեցու հարեանությունը բխում է մի ակամակտ աղբյուր, որը սեպտեմբերից սկսած աստիճանաբար ցամաքում է եւ մարտից սկսվում է լինել:

սած վերականգնում իր հոսքը:

Ժողովրդական ավանդությունն ասում է, որ իբր Օրբելյանների իշխանության օրոք այստեղ բազմաթիվ կրոնավորներ են բնակվել, սակայն ոչ եկեղեցու չափերը եւ ոչ էլ շինությունների բացակայությունը դրա օգտին չեն խոսում: Ժողովրդական մեկ այլ ավանդություն հավաստում է, որ լեռան ձագարն ապաստան է ծառայել բնակիչների համար թշնամիների հարձակման ժամանակ, որը միանգամայն հավանական է: Լեռան ընդարձակ ձագարը կամ տեղացիների խոսքերով՝ կողովը, կարող էր իրոք մեծ թվով մարդկանց բացքներ թշնամիներից:



Նույնպես ժողովրդական է լեռը կոչել է Դալիկ-թափա կամ Թափաի Դալիկ, որը բարձրանալով է «Շակ գագաթ»։ Սարգիս Սահմենցի Ջալալյանցն իր «Ճանապարհորդությունն ի Մեծն Քայաստան» աշխատության մեջ, թարգմանելով լեռնանունը, այն կոչել է Գագաթնալ, որովհետեւ նրան հայտնի չէր լեռան իսկական հայկական անունը: Խորհրդային իշխանության ժամանակ լեռնագագաթը վերանվանվել է Վայոց սար, թեպետ միշտ կլինի լեռանը վերադարձնել իր հարազատ Սարկողովը անունը:

Ուշ միջնադարում Վայոց ձորում հաստատված թրքալեզու բնակչությունը լեռը կոչել է Դալիկ-թափա կամ Թափաի Դալիկ, որը բարձրանալով է «Շակ գագաթ»։ Սարգիս Սահմենցի Ջալալյանցն իր «Ճանապարհորդությունն ի Մեծն Քայաստան» աշխատության մեջ, թարգմանելով լեռնանունը, այն կոչել է Գագաթնալ, որովհետեւ նրան հայտնի չէր լեռան իսկական հայկական անունը: Խորհրդային իշխանության ժամանակ լեռնագագաթը վերանվանվել է Վայոց սար, թեպետ միշտ կլինի լեռանը վերադարձնել իր հարազատ Սարկողովը անունը:

Բարկեն ԳՐԻՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ.

ԲԱՆԹԱՐԱՆ ԳՐԱՐԱՆ (1601-1658)

«ԳՐԴԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՆՈՍ (ՕՐԱԿՈՒԼ) ԿԱՄ ՈՂՋԱՆՈՇՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» գրքից

1. Մարդն ու իր դարաշրջանը: Նույնիսկ բացառիկ արժանիքներով օժտված մարդիկ կախում ունեն իրենց ժամանակաշրջանից: Ամենքին տրված չէ այն ժամանակը, որին իրենք արժանի են: Շատերը, ում բաժին է ընկել նման ժամանակաշրջան, չեն կարողացել սահմել այն: Որեւէ մեկը արժանի է եղել լավագույն ժամանակների, սակայն ոչ միշտ է բարձր հաղթանակում: Ամեն բան իր ժամանակն ունի. նույնիսկ համրահայտ մեկը կախում ունի մոդալից: Բայց իմաստությունն ունի այն ասանկանություն, որ իմը հավերժական է, եւ եթե այդ դարը իրենք չէ, ապա իրեն են պատկանում գալիք դարերը:

2. Երջանիկ լինելու արվեստը: Սրա համար քիչ դեղատոմսեր չկան, սակայն ամեն բան չէ, որ ձեռնում է իմաստունին: Հաջողությանը կարող է նպաստել ճանաչողությունը: Ոմանք անհող կերպով կարող են կանգնել բախտի դռանն ու սպասել, թե երբ նա գործի կանգնի: Ուրիշ խելոքները, համառոտն առաջ մղվելով, գործում են՝ հույսը դնելով իրենց ուժերի վրա, քանզի քաջության բերելով հաճախ հաջողվում է հասնել երջանկության եւ շողորրոթությանը նրա համակարանը շահել: Սակայն միշտ խորհելով՝ չկա լավագույն ճանապարհ, քան բարեգործությունն ու գթասրտությունը, քանզի չկա գերագույն երջանկություն, քան ողջախոհությունը, ինչպես որ չկա առավել դժբախտություն, քան անողջախոհությունն է:

3. Սեփական բերություններից ամենափոքրն անգամ չի կարելի հանդուրժել: Սկսած կատարելության նշանը՝ Հոգեկան ու մարմնական արտաճումն իր հոսքը:

ԽՈՐԵՐԴԱՆԻՇՆԵՐ

(Ըստ Ջեք Թրեսիդեյրի)

Հնագույն ժամանակներից ի վեր խորհրդանշներն ուղեկցել են մարդուն: Դրանց օգնությամբ մարդը մշտապես փորձել է փորձում է իր գաղափարները դարձնել ավելի տեսանելի ու ճանաչելի: Խորհրդանշների դերն ու նշանակությունը, շատ հաճախ մեծանալով, հասել են առավել մեծ արժեքի՝ դադարելով լոկ գեղարվեստորեն լուծված ցուցանշան կամ ուղեցույց լինելուց:

Հազարամյակների ընթացքում դրանք օգնել են արվեստագետներին արտահայտելու բնության ու մարդկային կյանքի մասին իրենց ունեցած մտքերն ու խոհերը: Խորհրդանշներն իրենց մեջ կարող են կրել հսկայական ինֆորմացիա եւ դրանով հանդերձ մնալ պարզ ու մատչելի՝ յուրացվելու, հիշվելու առումով: Շատ խորհրդանշներ օժտված են ոչ թե մեկ, այլ բազում նշանակություններով, քանի որ իրենց մեջ կրում են իմաստային տարբեր հենքեր ունեցող գաղափարներ:

Խմբագրությունը նպատակ ունի այսուհետ ընթերցողին ներկայացնել համընդհանուր ճանաչում ստացած մի շարք խորհրդանշներ, որոնք ընդունվել, կիրառվել եւ կիրառվում են նաեւ մեր ժողովրդի մշակույթի տարբեր ոլորտներում, ինչպես նաեւ եկեղեցու՝ քրիստոնեական գաղափարների, ծեսերի եւ արարողակարգերի մեջ: Անշուշտ, մեր եկեղեցուն վերաբերող խորհրդանշները ներկայացվելու են մեր հայրերի մեկնությունների հիման վրա:

ԳՈՒՅՆԵՐ

Սպիտակ - լույսի բացարձակ գույնը, այստեղից էլ մաքրության, ճշմարտության, անմեղության, զոհաբերության, աստվածայինի խորհրդանշ: Թեպետ այն ունի որոշակի բացասական նշանակություններ՝ երկյուղ, վախկոտություն, սառնություն, դատարկություն, մահվան դժգոհություն, այնուամենայնիվ, սպիտակը «սեւ եւ սպիտակ» հակադրության դրական կողմն է խորհրդանշական բոլոր համակարգերում:

Սպիտակ սգո գգեստների ավանդական կիրառումը Չինաստանում, հին Հունում, ինչ-որ ժամանակ նաեւ Եվրոպայում, ավելի շատ խորհրդանշել է ոչ թե վիշտը, այլ հանգուցային սպասվող նոր կյանքի նկիւրճը:

Սպիտակը նկիրումի, նորադարձների եւ նորախաղատների համապարփակ խորհրդանշն է, անեղծ գույնն է քրիստոնեական մկրտության, օծման, ամուսնության եւ այլ ծեսերի, որոնք խորհրդանշում են անցումը մեկից մեկ այլ կենսական քմերի: Որպես հոգեառի եւ սրբության, ճշմարտության եւ հայտնության գույն այն հազել են դրոփոքները (կետական քմեր) եւ այլ կրոնավորները՝ ինչպես հեթանոս, այնպես էլ քրիստոնեական աշխարհում:

Սպիտակը նաեւ գոհաբերումի խորհրդանշն է:

Լույսի եւ ուրախության փոխկապի գաղափարը սպիտակը դարձրել է նաեւ տոնականի խորհրդանշ: Սպիտակ ծուն խորհրդանշում է արարչագործու-



թյունը, սպիտակ աղավնի՝ խաղաղություն եւ Սուրբ Հոգին, սպիտակ շուշանը՝ անմեղություն եւ անեղծություն: Սպիտակը խորհրդանշն է նաեւ դրախտի:

Մեր եկեղեցու հայրերի՝ խորանների մեկնություններում սպիտակը համարվում է 4 տարբերից մեկի օդի, մաքրության եւ պարգության (Ներսես Շնորհալի), մաքուր սրբության (Գրիգոր վոյ, Նյաթեցի), մտքի պարգության (Գրիգոր Տաթևացի, Պողոս Բարսեղյան, Ստեփանոս Ջուղայեցի) խորհրդանշը: Հայ մանրանկարչության մեջ սպիտակ շուշանը (խաչի խորհուրդ) արտահայտել է հենց վերահիշյալ հատկանիշների իմաստը:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Յիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին
Պատասխանիչ՝ Ս. Եջմիածին Քրիստոնեական դատարանության եւ քարոզչության կենտրոն

Գրաքանակ վկայական՝ 624, Դասիչ՝ 69333

Գլխավոր խմբագիր՝ Ստեփան Ստամբուլյան
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դատարանության եւ քարոզչության կենտրոն
Չեռախոս՝ (0+31) 56780

Մայր Աթոռ Ս. Եջմիածին տպարան

Ստոր. է տպագր. 15. 8. 2000 թ. Տպաք.՝ 2500

Գինը՝ 50 դրամ